IHSS IN-HOME SUPPORTIVE SERVICES

CDSS

W-4/DE-4 ձևերի մասին փաստերի թերթիկ

Ի՞նչ է W-4/DE-4-ը:

W-4/DE-4 ձևերն օգտագործվում են դաշնային և նահանգային եկամտային հարկերի չափը որոշելու համար, որոնք պետք է պահվեն աշխատողի աշխատավարձից: W-4-ը լրացվում է դաշնային եկամտահարկի պահումների համար, իսկ DE-4-ը նախատեսված է նահանգային եկամտահարկի պահումների համար: Դաշնային և նահանգային եկամտահարկերը ավտոմատ կերպով չեն պահվում IHSS/WPCS մատակարարի երաշխիքներից:

Ի՞նչ է սա նշանակում IHSS/WPCS-ի մատակարարների համար:

IHSS/WPCS-ի մատակարարները համարվում են տնային տնտեսության աշխատակիցներ և, որպես այդպիսին, ոչ մի եկամտահարկ չի պահվում առանց լրացված W-4/DE-4 ձևերի: Եկամտահարկը պահելու ցանկություն ունեցող մատակարարները պարտավոր են լրացնել և ներկայացնել հետևյալ ձևերը.

- W-4՝ աշխատողի պահումների գումարի մասին դաշնային տեղեկանք
- DE-4՝ աշխատողի պահումների գումարի մասին նահանգային տեղեկանք

Մատակարարները կարող են ներբեռնել W-4/DE-4 ձևերը ստորև բերված IRS-ի և EDD-ի կայքերից.

- Դաշնային՝ https://www.irs.gov/forms-pubs/about-publication-15-t
- Նահանգային՝ https://edd.ca.gov/en/payroll_taxes/forms_and_publications

Նշում. W-4 և DE-4 ձևերը լրացնելու համար մատակարարները կարող են հղում կատարել IRS-ի և EDD-ի կայքերում առկա հրապարակումներին և/կամ խորհրդակցել հարկային մասնագետի հետ:

Ինչպե՞ս կարող եմ ներկայացնել W-4/DE-4 ձևերը:

Լրացված W-4 և/կամ DE-4 ձևերը վերադարձվում են ձեր վարչաշրջանի գրասենյակ՝ հետագա մշակման համար, որտեղ ձևաթղթերը ստուգվում են, որպեսզի լինեն ճշգրիտ և ամբողջական: Հաստատվելուց հետո վարչաշրջանը ձևերը կուղարկի IHSS-ի աշխատավարձերի կառավարման բաժին՝ հետագա մշակման համար:

Օգտակար խորհուրդներ W-4/DE-4-ը լրացնելու համար.

- Մատակարարները պետք է լրացնեն ձևը յուրաքանչյուր շահառուի համար, ում հետ աշխատում են, և անպայման լրացնեն դրանք ամբողջությամբ և կոկիկ: (Մասնավորապես պետք է լինի լրիվ անունը (անունը և ազգանունը), սոցիալական ապահովության համարը (SSN) և/կամ հասցեն):
- Սոցիալական ապահովության համարը (SSN) պետք է կապված լինի նշված մատակարարի հետ:
- Լրացնելու կարգավիճակը պետք է հստակ նշված լինի, և պետք չէ նշել մի քանի վանդակներ:
- Դոլարային ընդհանուր գումարը պետք է լինի ճիշտ և/կամ կոկիկ գրված: (Պետք է լինի որակավորվող երեխաների և այլ կախյալ անձանց ընդհանուր գումարը: Նպաստների քանակը կամ տոկոսները չեն թույլատրվում):
- Խնդրում ենք համոզվել, որ օգտագործեք ձևաթղթի վերջին տարբերակը:
- Մատակարարի ստորագրությունը պետք է նշված և բնօրինակը լինի (պատճենահանած ստորագրություն չի թույլատրվում):
- Խնդրում ենք շտրիխով չսպիտակեցնել գրածը: Այդ դեպքում պետք է լրացնել նոր ձև և ներկայացնել մշակման:
- W-4-ում «EXEMPT» / / «Ազատված» հայտատարարելու դեպքում 2-4-րդ ՔԱՅԼԵՐԻ դաշտերը պետք է դատարկ լինեն:
- DE-4-ում նահանգային հարկերի համար «EXEMPT» / «Ազատված» հայտատարարելու դեպքում երրորդ տողի վանդակը պետք է ՆՇԵԼ, իսկ 1-ին և 2-րդ ՏՈՂԵՐԸ պետք է դատարկ լինեն:

IHSS IN-HOME SUPPORTIVE SERVICES

CDSS

W-4/DE-4-ի վերաբերյալ հաճախակի տրվող հարցեր

Հ. Անհրաժեշտ է արդյոք ներկայացնել W-4/DE-4 ձևերը:

Պ. Դաշնային և նահանգային եկամտահարկերն ավտոմատ կերպով չեն պահվում IHSS/WPCS մատակարարից: Այն մատակարարները, ովքեր ցանկանում են եկամտահարկը պահել, պարտավոր են լրացնել և ներկայացնել W-4/DE-4 ձևերը:

Հ. Անհրաժեշտ է արդյոք ամեն տարի լրացնել նոր W-4 կամ DE-4 ձևը:

Պ. Այն մատակարարները, որոնց դաշնային կամ նահանգային եկամտահարկը պահվում է իրենց վճարումից, կարիք չունեն յուրաքանչյուր տարի ներկայացնել նոր W-4 կամ DE-4 ձևը: Մատակարարները պետք է ներկայացնեն նոր ձև՝ իրենց հարկային պահումների կամ արտոնությունների մեջ փոփոխություններ կատարելու համար:

Հ. Որքա՞ն ժամանակ կպահանջվի իմ ձևաթղթ(եր)ի մշակման համար:

Պ. Այս ձևաթղթերը սովորաբար մշակվում են IHSS-ի աշխատավարձերի կառավարման բաժնի կողմից ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հ. Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք իմ ձևաթուղթը մշակվել է:

Պ. Մատակարարները պետք է ստուգեն իրենց վճարումը, որպեսզի տեսնեն, թե արդյոք պահումները կատարվել են: Հարցերի դեպքում մատակարարները պետք է դիմեն իրենց տեղական շրջանի IHSS գրասենյակ:

Հ. Ինչու՞ իմ W-4/DE-4 ձևաթուղթը մերժվեց:

Պ. Մատակարարները պետք է դիմեն իրենց տեղական շրջանի IHSS գրասենյակ՝ ստուգելու մերժված W-4/DE-4 ձևաթուղթը: Սխալ կամ բացակայող տեղեկություններով ձևաթղթերը վերադարձվում են վարչաշրջան՝ նշելով, թե ինչու են մերժվել:

Հ. Ի՞նչ պետք է անեմ, եթե հարցեր ունեմ W-4/DE-4 ձևաթղթերը լրացնելու վերաբերյալ կամ օգնության կարիք ունեմ դրանք լրացնելու համար:

Պ.

Մատակարարները պետք է կապ հաստատեն հարկային մասնագետի հետ՝ այս ձաթղթևերը լրացնելու վերաբերյալ հարցերի համար:
Վարչաշրջանը և նահանգը հարկային մասնագետներ չեն և չեն կարող խորհուրդ տալ մատակարարներին, թե ինչպես լրացնել այս ձևերը:

Q: Ի՞նչ անել, եթե անհրաժեշտ է փոփոխություն կատարել իմ պահումների մեջ:

A: Եթե պահումների գումարը պետք է թարմացվի, ապա մատակարարները պետք է ներկայացնեն նոր W-4 և/կամ DE-4 ձև: